ածել եւ մաքրել յԱյլն Ծննդեան ըստ օրինակին Յունաց և Լատինաց։ Յոյնք կարի յոյժ ընդդէմ դառնային, Դատաւորք իբրու թէ զահի հարեալ յաղմկէ Յունաց, թերևս թելադրութեամբ նոցին էր, ոչ ինչ կարացին ասել կամ առնել, այլ միայն երթիցուք 'ի քաղաքն, և անդ վերստին լիցի քննութիւն հրովարտակաց, և թէ, այդոքիկ պահանջք ձեր Բարձրագոյն հրամանի պէտս ունին, և այնպէս անկատար թողեալ զգործն դարձան յԵրուսաղէմ։ Եւ զկնի աւուրց ինչ եկն Բդեշխն Գազայու Մէհէմմէտ Բաշիտ Փաշա, զոր յանկուցեալ էին Յոյնք 'ի կողմն իւրեանց, եւ վերստին կազմեցաւ ժողով մեծ յատենի նորա, եւ եղեւ վէճ սաստիկ։ Յոյնք մատուցին զհին հրովարտակս իւրեանց, սրովք տքնէին զդէմ ունիլ Հայոց, և նոքա ընդդէմ զինէին թէ այդոքիկ հնագոյն են ժամանակաւ քան զմեծ դատն որ ընդ Յունաց, այլ այսոքիկ բանք չեղեն լսելի։ Թէպէտ և գրեցաւ վասն շղթայից և պատուհանաց Իլամ և Հէօճէթ, սակայն 'ի նմին յառաջ բերին, թէ հայեցեալ 'ի հրովարտակս Յունաց, չհամարձակեցան հրամայել զգործադրութիւն բանալոյ արտաքին դրան, մինչ 'ի դալուստ Բարձրագոյն հրամանի։ զայս Հէօճէթ եաուն վաւերել Հայք մեծի Դենպետին։

Իսկ Զաքարիա Պատրիարք տրտմեալ յոյժ 'ի վերայ այսպիսի ձախող ելիցն իրաց, ցաւօք սրտի գրէ առ Փոխանորդն 'ի Կոստանդինուպոլիս, մանաւանդ զզուեալ յազգային չփոթութենէ, ուր յետ այլոց բանից ասէ։ «Ես անարժանութեամբ նոր դարձայ Պատրիարք, մինչեւ ես զիս չճանաչեմ, զայլս ոչ կարեմ ճանաչել։ Եթէ չհաւանին իմ կառավարութեան, եւ չկամին ընդունիլ, ես ոչ հակառակիմ, ոչ խարդախութեամբ խօսիմ կամ գրեմ, այլ իմ յօժարութեամբ գրեմ զիմ հրաժարական առանց խղճի, թող հակառակորդք մոռածեսցեն, կորուսի զիմ երջանիկ հանգստութիւն, եթէ չկթիցեմ անուշահոտ պտուղ, զի՞ է ինձ աշխատիլ և տնկել անպտուղ ծառ տերեւալի՝ միայն համբաւ և ոչ այլ ինչ։ Ջանամ ըստ ապարանն պայծառացուցանել, դպրատուն մի օրինաւոր կարգադրութեամբ հաստատել, այս ըստ իմս ըղձի։ բայց 'ի սոցանէ ըստ այժմեան կառավարութեան, հարկաւոր է